

ՆՈՐ ՆԻԿԵԱԿԱՆ ԵՐՐՈՐԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Ա. Գ. ՔԱԼԱՇՅԱՆ

Փիլ. գիտ. թեկն., դոցենտ

Քրիստոնեության պատմությունը միանգամայն ակնհայտորեն ցույց է տալիս, որ դոգմատիկական ցանկացած զարգացում իր կնիքն է դրել ժամանակաշրջանի ներեկեղեցական հարաբերությունների դիմամիկայի վրա:

Այդ տեսանկյունից մեծ նշանակություն ունի հատկապես կոնկրետ դարաշրջանի դոգմատիկական վիճաբանությունների վերլուծությունը, քանի որ աստվածաբանական դպրոցների և հոսանքների գործունեությունը, որպես կանոն, նպատակ է հետապնդել պահպանել կանոնական համակարգերը, կամ էլ՝ փոփոխել դրանք: Դոգմատիկական նմանատիպ գործունեությունը թելադրված է եղել կոնկրետ աստվածաբանական խմբավորման (խմբավորումների) շահերով, պահանջումներով և նպատակներով: Այդպիսին էր իրավիճակը նաև IV դարի 50-ական թվականներին, երբ հակաերոդդաբանական մոր հոսանքները (անոմեականներ, եվոմեականներ) հետապնդում էին մեկ հիմնական նպատակ՝ մոռացության մատնել Նիկեական Յանգանակը: Դա բավականին բարդ մի գործընթաց էր, որը հակաերոդդաբանական այդ հոսանքներին հարկադրում էր դաշնակիցներ փնտրել «չեզոք» եպիսկոպոսների շրջանում: Հականիկեական խմբակցության դոգմատիկ գործունեության պրակտիկ արդյունքը հանդիսացան քրիստոնեական արևելքում հրավիրված եկեղեցական ժողովները, որոնց դավանաբանական մորարարությունները ներեկեղեցական կյանքում մեծ լարվածություն ծնեցին:

IV դարի ներեկեղեցական կյանքի առանձնահատկություններով պայմանավորված՝ աստվածաբանական և եկեղեցագիտական մատենագրության մեջ ընդունված է հետնիկեական դոգմատիկական վիճաբանությունների պատմությունը ստորաբաժանել երկու հիմնական փուլի, որոնց միջև շրջադարձային է համարվում **Ալեքսանդրիայի 362 թ. ժողովը**:

Հայտնի է, որ **Կոստանցիուսի իշխանության վերջին տարիներին նրա հալածանքների հետևանքով Բյուզանդիայում ոչ մի նիկեական եպիսկոպոս չէր գործում**, ինչը բավականին ծանր կացություն էր ստեղծել ուղղադավան եկեղեցու համար: Ռուս աստվածաբան և եկեղեցագետ Ա. Սպասկին, հենվելով ժամանակի հանգանակային գրականության վրա, պնդում է, թե «... այդ շրջանում մկրտության և խորհրդակատարության ժամանակ Արևելքում շարունակում են կիրառվել տեղական հանգանակները, իսկ եթե դրանցում դոգմատիկ մասով լրացումներ են կատարվում, ապա լրացման ակունք է հանդիսանում ոչ թե Նիկեական Յանգանակը, այլ վերջինիս հակառակորդների գրչին պատկանող հանգանակները»¹: Դրությունը մի փոքր շտկվեց 360 թ., երբ Հուլիանոս կայսրը Կոստանցիուսի օրոք հալածված բոլոր եպիսկոպոսներին վերադարձրեց իրենց աթոռները: Եվ քանի որ դոգմատիկական պայքարի այս փուլում հականիկեական երրորդաբաններն այլևս չէին վայելում կայսերական իշխանության հովա-

¹ Спасский А. История догматических движений в эпоху Вселенских Соборов (в связи с философскими учениями того времени). Сергиев Посад, 1914, с. 429.

նավորությունը, նրանցից շատերը հարկադրված էին քննաբար վերանայել անցած տասնամյակների դոգմատիկական վիճաբանությունների արդյունքները և ճշգրտել սեփական հավատքային դիրքորոշումը: **Այդ որոշումների հանգուցալուծումն էլ հանդիսացավ 362 թ. Ալեքսանդրիայի տեղական ժողովը:**

Ալեքսանդրիայի 362 թ. ժողովին մասնակցում էին դարաշրջանի երրորդաբանական երեք հոսանքների ներկայացուցիչներ՝ **նիկեականներ, համանմանականներ** (օմիուսականներ) **և ապոլինարականներ:** Դրանով էլ պայմանավորված էր ժողովի բանավիճային բնույթը և ինքնին հասկանալի է, որ ուղղադավանության հենքի վրա մեկտեղվելու համար նրանցից մեծ ջանքեր էին պահանջվում: Այդ ֆոնի վրա առավելապես պետք է արժևորել այն, որ եկեղեցական միության ակունքներում կանգնած էին նիկեական ուղղադավանության ջերմ պաշտպան Աթանաս Ալեքսանդրացին և Զիլարիոս Պուլատիեցին:

Ալեքսանդրիայի ժողովի աստվածաբանական հիմքերից մեկը **Անկյուրիայի 358 թ. ժողովի** դավանաբանական որոշումն էր²: Աթանաս Ալեքսանդրացին դրանում կարևորում էր հիմնարար երկու սկզբունք՝ նախ այն, որ **«Աստված Որդին Զայր Աստծուն նման է ոչ միայն ներգործությամբ, այլև էությամբ»**, և այն, որ **«Զայր Աստված Որդուն ծնել է ոչ միայն ցանկությամբ, այլև էությամբ»**: Ժողովական այդ որոշումը կարևորվում է նրանով, որ հակադրվելով ժամանակի հակաերրորդաբանական հանգանակներին, այն դարձավ նիկեականության վերջնական հաղթանակի հիմքերից մեկը: Աթանաս Մեծը ցույց տվեց նաև, որ հետևողական մեկնության դեպքում *ομοιουσος* (համագոյություն) և *ομοουσιος* (համանմանություն) եզրերը կարող են օգտագործվել իբրև հոմանիշներ³: Եվ **իրական** հավատքային միություն հաստատելու միտումով ալեքսանդ-

² Եկեղեցական մատենագրությունը արժեքավոր տեղեկություններ է պահպանել Անկյուրիայի ժողովի դոգմատիկ գործունեության մասին, որի որոշումներն արձանագրված են Եպիփան Կիպրացու «Ընդդեմ հերձվածոց» աշխատության մեջ: Այդ որոշումները քիչ բանով են նման ժամանակի դավանաբանական հանգանակներին: Ճիշտ կլինի ասել՝ այստեղ առնչվում ենք աստվածաբանական ավարտուն տրակտատի հետ, որում շարադրված է նիկեական երրորդաբանության շուրջ ծավալված բանավեճերի նախապատմությունը և ձևակերպված է ապացույցների բավականին ծավալուն համակարգ, տե՛ս **Epiphan. Adversus haeresis / Migne J. P. Patrologiae cursus completus. Series graeca** (այսուհետ՝ PG), T. LXXIII, Paris, 1865, cap. 1, p. 2-11.

³ Տե՛ս **Свт. Афанасий Великий. Послание о соборахъ, бывшихъ въ Ариминъ италійскомъ и въ Селевкіи исаврійскомъ / Творения в четырех томах. Т. III, М., 1994, с. 147, տե՛ս նաև Migne J. P. Patrologiae cursus completus. Series Latina** (այսուհետ՝ PL) PL, Acc. I, T. X, p. 525.

Աթանաս Մեծը միանգամայն հիմնավոր ցույց է տալիս, որ ուղղադավանությունից շեղվելու պարագայում «համանմանություն» եզրի կիրառումը կարող էր հանգեցնել աստվածաբանական երեք մոլորությունների: Առաջին դեպքում այն կարող էր մեկնաբանվել իբրև «Զայր և Որդի Աստծու սուբստանցիոնալ անդեմ միություն», գործնականում «ոչնչացնելով» Որդի Աստծու իրական կեցությունը: Երկրորդ դեպքում Որդի Աստծու իրական կեցություն ասելով կարող են դավանել «Զայր Աստծո սուբստանցիոնալ բաժանում», այլ կերպ ասած՝ «Որդի Աստծուն կարող են ներկայացնել իբրև Զայր Աստծու սոսկական մի մասնիկը»: Եվ վերջապես երրորդ դեպքում աստվածային էությունը կարող էր ներկայացվել իբրև «նախագոյ սուբստանց», որի համեմատությամբ ինչպես Զայրը, այնպես էլ Որդին հանդես են գալիս որպես «որոշակի հատկանիշների սոսկական կրողներ», տե՛ս **Свт. Афанасий Великий. Послание о соборахъ, бывшихъ въ Ариминъ италійскомъ и въ Селевкіи исаврійскомъ. с. 143: Իսկ**

րիական հայրը Բարսեղ Անկյուրիացու մասին գրում է. «Բարսեղի նման մարդկանց հետ չպետք է վերաբերվել ինչպես թշնամու, որովհետև նրանք մեզանից տարանջատվում են միայն մեկ բառով, այլ հարկ է նրանց եղբայր համարել, քանի որ մտածում են այնպես, ինչպես մենք»: Ըստ Աթանաս Մեծի՝ երբ համանմանականները պնդում են «... և՛ էությունից է, և՛ համանման (Հայր Աստծուն՝ Ա. Ք.), ապա դրանով այլ բան չեն ասում, քան այն, որ **նրանք համագոյ են** (ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)»⁴, քանի որ «ծնունդ» և «համագոյություն» եզրերը միևնույն իմաստն ունեն:

Եկեղեցական մատենագրությունը բավականին արժեքավոր տեղեկություններ է պահպանել նաև Ալեքսանդրիայի ժողովի մասնակից ապոլինարականների մասին: Մասնավորապես հայտնվում է, որ Լաոդիկեի եպիսկոպոս Ապոլինար կրտսերը ոչ միայն բացահայտորեն պաշտպանում էր նիկեական հայրերին և նրանց կողմից հռչակված համագոյության աստվածաբանությունը, այլև այդ դիրքերից դատապարտում էր արիոսականությունը: Սուրատես պատմիչը վկայում է, որ Ապոլինարը մեծ ճանաչում էր ձեռք բերել հատկապես Հուլիանոսի շրջանում, երբ «... հետևելով հույն Պլատոնին՝ պերճախոսությամբ երկխոսությունների ձևով շարադրեց Ավետարանները և Գործքը: Դրանով նա օգտավետ գործ կատարեց ոչ միայն քրիստոնեության համար»⁵:

Աթանաս Մեծի կողմից 362 թ. օգոստոսին հրավիրված Ալեքսանդրիայի ժողովին մասնակցում էին Ալեքսանդրիայի, Իտալիայի, Արաբիայի, Եգիպտոսի և Լիբիայի «թվով սակավ, հավատքով՝ անխաթար և վաստակով՝ լիառատ» նիկեականության ջատագով 22 եպիսկոպոսներ»⁶: Թեև ժողովի արձանագրությունները չեն պահպանվել, սակայն նրա աստվածաբանական քննարկումները և դավանաբանական որոշումները կարելի է ճշգրտությամբ վերարտադրել՝ հիմք ընդունելով Ռուփինոսի եկեղեցական պատմությունը, անտիոքացիներին հղված ուղերձը, Աթանաս Ալեքսանդրացու կողմից գրված ժողովական «տոմարը» և, վերջապես, Բարսեղ Մեծին հղված Ապոլինար Լաոդիկեցու նամակը: **Ժողովի աստվածաբանական քննարկումների առանցքը կազմել են երրորդաբանական հարցերը**, որոնք քննարկվել են երեք հարթությամբ:

Հիլարիոսը գրում է, որ ինչպես «համագոյություն», այնպես էլ «համանմանություն» եզրերն աստվածաշնչական հիմնավորում չունեն: Բայց եթե այն ընդունվել և ուղղադավան է ճանաչվել նիկեական 318 եպիսկոպոսների կողմից, ապա այդ համատեքստում «համանմանություն» եզրն ինքնին դատապարտելի չէ, եթե մեկնաբանվում է հավուր պատշաճի, մանրամասները տես **Migne J. P. PL**, Acc. I, T. X, p. 527-528, 530, 534-536, 541-543.

⁴ **Свт. Афанасий Великий.** Послание о соборахъ, бывшихъ въ Ариминъ италійско-мъ и въ Селевкіи исаврійском, с. 147.

⁵ **Сократ Схоластик.** Церковная история. М., 1996, кн. III, гл. 16, с. 151.

⁶ Անտիոքացիներին հղված Աթանաս Ալեքսանդրացու նամակում թվարկվում են Եվսեբիոս Վերջելացին, Լյուցիֆեր Սարդինացին, Աստերիոս Պետրացին (Արաբիա), Գայոս Պարատոնիացին (Լիբիա), Ագափ Ֆրագոնացին, Ամոնիոս Պախնեմունիսցին, Ագափոդեմոն Աքեդիացին, Դրակոնտիոս Երմոպոլացին (Փոքր), Ադելփիոս Օնուֆացին, Հերմիոն Տանեսացին, Սարկոս Լիբիացին, Թեոդոր Ատրիբացին, Անդրեաս Արսենոտացին, Պափնուտիոս Սախացին, Սարկոս Փիլովցին, Զոիլ Անդրոցին, Մինա Անտիփրոնացին, տես **Свт. Афанасий Великий.** Свитокъ Афанасія, Александрийскаго Архiepископа, къ Антиохійцамъ / Творения в четырехъ томахъ. Т. III, с. 173, տես նաև **Migne J. P. PL**, Acc. I, T. XXI, p. 433.

Առաջնահերթություն է տրվել «եկեղեցուց ներս նիկեական դոգմատիկայի հեղինակության վերականգնման» հարցին, Ս. Երրորդության աստվածաբանական մեկնության ոլորտում կարևորվել է *οὐσία* և *πρόστασις* աստվածաբանական եզրերի ճշգրտումը և, վերջապես, մեծ տեղ է հատկացվել Ս. Հոգու աստվածաբանական մեկնությանը:

Ալեքսանդրիայի 362 թ. ժողովի դոգմատիկական գործունեության բարձրակետը նիկեական երրորդաբանության վերահաստատումն էր: Ժողովական եպիսկոպոսները հավաստեցին, որ երրորդաբանական հերձվածները մերժելու և ուղղադավանությունը պահպանելու գործում անառարկելի և բացառիկ հեղինակություն է վերապահված միայն Նիկեական Հանգանակին: Դա նշանակում էր, որ **Նիկեայի տիեզերաժողովից 37 տարի անց ուղղադավան երրորդաբանությունը մեկ անգամ ևս հռչակվեց իբրև «անսասան» ու «անփոփոխ» հավատքային սկզբունք:** Ժողովը որոշեց Նիկեական Հանգանակից բացի մերժել ցանկացած այլ հանգանակ, հավատքի սահմանում կամ դավանագիր, «քանի որ այն ոչ միայն ոչ մի անկատարություն չի բովանդակում, այլև լի է բարեպաշտությամբ»⁷: Իսկ որևէ այլ հանգանակ հաստատելու փորձը «հանգանակ գրել ցանկացողների համար» որակվեց որպես «գայթակղության քար»⁸:

Վավերագրերի վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ Ալեքսանդրիայի 362 թ. ժողովի կողմից նիկեական երրորդաբանության «հեղինակության վերականգնումն» օրգանապես շաղկապվել է եկեղեցական միությունը վերականգնելու հարցին: Ընդ որում, ժողովականների համար ուղեցույց է հանդիսացել այդ գործի անխոնջ առաքյալի՝ Աթանաս Ալեքսանդրացու դիրքորոշումը: Իսկ նա հորդորում էր «... համերաշխության ձգտող յուրաքանչյուրին, ... ինչպես նաև արիոսականությունից հեռացածներին եկեղեցի հրավիրել, նրանց այնպես ընդունել, ինչպես հայրերն են ընդունում որդիներին, ... նրանցից ավելին չպահանջել, քան այն, որ բանադրեն արիոսական հերձվածը և դավանեն սուրբ Հայրերի կողմից Նիկեայում հաստատած դավանանքը, պահանջել նաև, որպեսզի նրանք բանադրեն բոլոր նրանց, ովքեր Սուրբ Հոգին համարում են արարված և Քրիստոսի էությունից տարանջատված»⁹:

Անտիոքացիներին հղված Աթանաս Ալեքսանդրացու ուղերձից տեղեկանում ենք, որ ժողովում հանգամանալից քննության է ենթարկվել նաև երրորդաբանության համար առանցքային նշանակություն ունեցող «*οὐσία*» (ուսիա) և «*πρόστασις*» (հիպոստասիս) աստվածաբանական եզրերի ճշգրտման հարցը:

Քանի որ «*πρόστασις*» եզրն աստվածաշնչական չէր և «կասկած էր հարուցում», հիմնահարցի մեկնության շուրջ սուր բանավեճեր էին ծավալվել հատկապես նիկեականների և համանմանականների միջև: Բանն այն էր, որ «*τις πρόστασις*»-ների (Ս. Երրորդության երեք հիպոստասների՝ Ա. Ք.) ոչ ճիշտ մեկնությունը կարող էր հանգեցնել արիոսական հետևությունների, եթե հիպոստասներից յուրաքանչյուրին վերագրվեր միմյանցից օտարված կեցություն, կամ էլ

⁷ Տե՛ս **Свт. Афанасий Великий**. Свитокъ Афанасія, Александрійскаго Архієпископа, къ Антиохійцам. с. 167.

⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 168-169:

⁹ Նույն տեղում, էջ 167:

եռաստվածության, եթե յուրաքանչյուր անձին վերագրվեր հակադիր էություն (= 3 էություն և 3 Աստված): Համանմանականները պարզաբանեցին, որ «*τὴν νποστασις*»-ներ ասելով իբրև իրական գոյ «դավանում են Սուրբ Երրորդությանը՝ իրական գոյ Հայր Աստծուն, իրական գոյ Աստված Որդուն և իրական գոյ Սուրբ Հոգուն»: Նրանք արմատապես մերժեցին «Երեք Աստծո» և «երեք սկզբի» դավանանքը, պնդելով որ Ս. Երրորդությունը մեկ Աստված է, միասնական Սկիզբ, համագոյ Հայր, Որդի և Սուրբ Հոգի: **Ի վերջո ընդունվեց փոխգիշումային տարբերակ՝** ուղղադավան համարվեց *ὁμοουσιος* եզրը՝ «*μία νποστασις*» նշանակությամբ և՛ «*τὴν νποστασις*» եզրը: Սակայն խորհուրդ տրվեց նաև «բավարարվել այն եզրերի օգտագործմամբ, որոնք հաստատված են նիկեական դավանանքով»¹⁰:

Ալեքսանդրիայի 362 թ. ժողովի դավանաբանական քննարկումների շրջանակներում հաջորդ կարևորագույն հիմնահարցը **Ս. Հոգու վերաբերյալ աստվածաբանական** քննարկումներն էին: Հայտնի է, որ Ս. Երրորդության դավանանքի շրջանակներում Նիկեական Հանգանակը արձանագրում էր. «Հավատում ենք և Սուրբ Հոգուն»: Եվ քանի որ Սիրմիումի 351 թ. դավանագրում¹¹ Ս. Հոգու վերաբերյալ հակամիկեական ընդարձակ սահմանում էր տրվել, Աթանաս Մեծն իր նամակներում սուր քննադատության ենթարկեց «արիոսականությունից հեռացած, բայց Ս. Հոգու մասին թյուր տեսակետ ունեցողներին»¹²: Որոշ վիճաբանություններից հետո **Ս. Հոգու աթանասյան ուղղադավան այդ լուծումներն էլ ընկան Ալեքսանդրիայի ժողովի դավանաբանական որոշումների հիմքում**: Ժողովը «բանադրեց բոլոր նրանց, ովքեր համարում էին թե Ս. Հոգին արարված է» և հռչակեց ուղղադավան այն վարդապետությունը, թե «Սուրբ Հոգին անբաժան է Քրիստոսի էությունից» և, որ «Հոգին օտար չէ, այլ սեփական է Որդու և Հոր էությանը և անբաժան է նրանցից»¹³:

Ալեքսանդրիայի 362 թ. ժողովը մեծ տեղ հատկացրեց նաև կազմակերպչական և կարգապահական հարցերի քննարկմանը: Այդ համատեքստում ժողովականներն առանձնահատուկ քննության նյութ դարձրեցին Ապոլինարի և ապոլինարականության հարցը, և քանի որ երրորդաբանական հարցերում ապոլինարականները հարում էին արմատական նիկեականներին, **Աթանաս Ալեքսանդրացին հակաարիոսական ճակատ կազմելու միտումով առաջարկեց այդ հարցում համերաշխել ապոլինարականների հետ**: Այդ հենքի վրա ապոլինա-

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 170:

¹¹ Մանրամասները տե՛ս **Свт. Афанасий Великий**. Послание о соборахъ, бывшихъ въ Ариминѣ италійскомъ и въ Селевкіи исаврійскомъ / Творения в четырех томах. Т. III, с. 121, 124, 125, 127-128.

¹² Մանրամասները տե՛ս **Свт. Афанасий Великий**. Къ Серапіону, Епископу Тмуисскому. Послание 1-е. Противъ хулителей, утверждающихъ что Духъ Святый есть тварь / Творения в четырех томах. Т. III, с. 3-49; **Свт. Афанасий Великий**. Къ тому же Серапіону, Послание 3-е. О Духе Святомъ / Творения в четырех томах. Т. III, с. 59-67; **Свт. Афанасий Великий**. Къ тому же Серапіону, Послание 4-е. О Святомъ Духе / Творения в четырех томах. Т. III, с. 67-92.

¹³ Տե՛ս **Свт. Афанасий Великий**. Свитокъ Афанасія, Александрійскаго Архіепископа, къ Антиохійцамъ, с. 167.

րականների և նիկեականների ձևավորված համերաշխությունն իր էությամբ և ուղղվածությամբ լիովին ուղղադավան էր և Աթանաս Ալեքսանդրացին կոչ արեց նաև զուսպ վերաբերմունք ցուցաբերել ապոլինարականների նկատմամբ, նրանց «հապճեպ կերպով չդատապարտել և չմերժել ... այլ ... ընդունելի համարել խաղաղության ձգտողներին և արդարացողներին»¹⁴:

Կարգապահական հարցերի շրջանակներում Ալեքսանդրիայի 362 թ. ժողովն անդրադարձավ նաև «Ամտիոքյան պառակտման» հիմնախնդրին և այն հաղթահարելու միտումով փորձեց համերաշխություն հաստատել վիճաբանող կողմերի միջև: Սակայն թե՛ մելիտենականները և թե՛ եվստաթետականները շարունակեցին պաշտպանել իրենց արմատական տեսակետները, ինչն էլ անհնար դարձրեց նրանց միջև միություն հաստատելու փորձերը:

Այսպիսով՝ Ալեքսանդրիայի 362 թ. ժողովը դարձավ այն հիմքը, որի վրա միավորվեցին «հին նիկեականները», իսկ ժողովի դավանաբանական որոշումները հավատքային կողմնորոշիչներ դարձան ուղղադավան երրորդաբանության վերջնական հաղթանակի համար: Ալեքսանդրիայի 362 թ. ժողովը կանխորոշեց նաև եկեղեցու հետագա 20 տարիների ընթացքը, որտեղ վճռորոշ դեր վերապահվեց «նոր նիկեական» երրորդաբանական աստվածաբանությանը:

IV դարի 60-ական թվականներին եկեղեցու կյանքը նշանավորվեց մի շարք այլ իրադարձություններով ևս: **Կոստանցիուս կայսեր մահվանից հետո Յուդեական կայսրության քաղաքական վերնախավը հրաժարվեց ուղղորդված կրոնական քաղաքականություն** վարելու պրակտիկայից: Ճիշտ է, եկեղեցու կյանքին միջամտելու պետական իշխանության պրակտիկան իսպառ չվերացավ, սակայն, ի տարբերություն IV դարի 30-50-ական թվականների, այն դարձավ սահմանափակ և ոչ հաճախ:

Արտաքին գործոնների էական թուլացման պայմաններում դրական տեղաշարժեր նկատվեցին նաև եկեղեցու ներքին կյանքում: Ազատ գործունեություն ծավալելու հնարավորություն ստացան եկեղեցական-դոգմատիկական հոսանքները, որի հետևանքով հետնիկեական եկեղեցական պատմության մեջ առաջին անգամ **վիճաբանական հավատքային հարցերի լուծումը դարձավ եկեղեցու ներքին գործը**: Էական փոփոխություններ կատարվեցին նաև հոգևոր դասի շրջանակներում: IV դարի 30-50-ական թվականների «արմատական եպիսկոպոսներին» փոխարինելու եկան համեմատաբար չափավոր հայացքների տեր հոգևորականներ, որոնք արտաքին միջամտությունների և հարկադրանքի էական թուլացման պայմաններում ձգտում էին **վիճաբանական հարցերը լուծել սեփական՝ ներքին միջոցներով**: Համեմատաբար ազատ գործունեության պայմաններում ժամանակի աստվածաբանական միտքն ավելի ու ավելի էր կողմնորոշվում դեպի նիկեական երրորդաբանություն:

Նիկեականության աճող ազդեցությամբ՝ աննկատ փոփոխության ենթարկվեց նաև վիճաբանական հավատքային հարցերի շրջանակը: **Նախկինում առաջնային համարվող Հայր և Որդի Աստծու համագոյության շուրջ ծավալված վիճաբանությունները IV դարի 60-ական թվականներին լրացվեցին նաև Ս.**

¹⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 171:

Յոգու վիճաբանություններով: Աստիճանաբար ամբողջական տեսք էին ստանում նաև քրիստոսաբանական վիճաբանությունները: Այլ կերպ ասած՝ հստակորեն ուրվագծվում էր երրորդաբանական վիճաբանությունների ավարտը և նախանշվում եկեղեցու համար չափազանց ծանր հետևանքներ ունեցող քրիստոսաբանական վիճաբանությունների սկիզբը:

Այդ ամենից կարելի է եզրակացնել, որ IV դարի 60-ականների աստվածաբանական վիճաբանությունները պայմանավորված են եղել փոխկապակցված երեք գործոններով՝ պետական իշխանության կրոնական քաղաքականության փոփոխություն (արտաքին գործոն), հոգևոր դասի սերնդափոխություն և աստվածաբանական վիճաբանական հարցերի սահմանային փոփոխություններ (ներքին գործոն):

361 թ. Կ. Պոլսի տեղական ժողովը որպես **«հավատքային ճշմարիտ սկզբունք»** հաստատեց **օմիականության կրեդոն՝ Նիկի լրամշակված դավանաբանական բանաձևը**¹⁵, որը հռչակում էր, թե **«Որդի Աստված նման է իրեն**

¹⁵ Սուրբատես պատմիչի և Թեոդորետի միջոցով Նիկի ժողովի դավանաբանական որոշման մասին մեզ են հասել երկու տեքստեր: Սուրբատես պատմիչը պահպանել է դավանագրի հետևյալ տեքստը՝ «Հավատում ենք միակ և ճշմարիտ Աստծուն, Ամենակալ Յորը, Արարչին և ամենայնի ստեղծողին: Եվ Միածին Միակ Որդուն, որը բոլոր ժամանակներից, բոլոր սկիզբներից, երևակայական ցանկացած ժամանակից ու մտայնությունից առաջ անկիրք կերպով ծնվել է Յորից, որի միջոցով արարվել են դարերը և ստեղծվել է ամեն ինչ, որը ծնվել է Միածին, մեկը՝ միակ Յորից, Աստված՝ Աստծուց, ըստ Գրքի նման է իրեն ծնող Յորը, որի ծնունդը հասանելի չէ ոչ մեկին, բացի նրան ծնող Յորից: Գիտենք, որ այս Միածին Որդին Յոր հրամանով մեղքը ոչնչացնելու համար իջավ երկնքից, ծնվեց Կույս Մարիամից, հարաբերվեց աշակերտների հետ և Յոր կամքով փրկագործեց մարդկությանը, խաչվեց ու մահացավ, իջավ դժոխք և այնտեղ իրագործեց այն, ինչը պետք էր, որտեղ նրան տեսնելով՝ դժոխքի սպասավորները դողացին, երրորդ օրը հարություն առավ և հարաբերվեց աշակերտների հետ, քառասուրյա լուծից հետո համբարձվեց երկինք և նստած է Յոր աջ կողմում, վերջին օրը կգա Յոր փառքով և յուրաքանչյուրին կդատի ըստ իր գործերի: Եվ Սուրբ Յոգուն, որին, ինչպես որ գրված է, Աստծու Միածին Որդի Յիսուս Քրիստոսը խոստացավ իբրև Մխիթարիչ ուղարկել մարդկանց: Բայց Յայրերի կողմից օգտագործվող «էություն» տերմինը, որն անհասկանալի է ժողովրդի համար, գայթակղություն է և պետք է մերժել, քանի որ Ս. Գրքում չի հիշատակվում, և այսուհետ խոսելով Աստծու մասին, ընդհանրապես պետք չէ այդ եզրը օգտագործել այն պարզ պատճառով, որ աստվածային գրքերը ոչ մի տեղ չեն հիշատակում Յայր և Որդի Աստծու էության մասին, մենք Որդուն դավանում ենք իբրև ըստ ամենայնի Յորը նման, ինչպես որ հաստատում և սովորեցնում են Սուրբ գրքերը», **Сократ Схоластик**. Церковная история. М., 1996, кн. 2, гл. 37, с. 107.

Թեոդորետը հաղորդում է դավանագրի հետևյալ տեքստը՝ «Հավատում ենք միակ ու ճշմարիտ Մեկ Աստծու, Ամենակալ Յորը, որով եղավ ամեն ինչ, և Աստծու միածին Միակ Որդուն, որը բոլոր ժամանակներից և բոլոր սկիզբներից առաջ ծնվել է Աստծուց, որի միջոցով են ստեղծվել տեսանելի ու անտես ամեն ինչ, հավատում ենք, որ Միածինը ծնվել է իբրև մեկը՝ միակ Յորից, Աստված՝ Աստծուց, որն ըստ Գրքի նման է իրեն ծնող Յորը, և որի ծնունդը հասանելի չէ ոչ մեկին, բացի նրան ծնող Յորից: Գիտենք, որ Աստծու այս Միածին Որդին, ինչպես գրված է, մեղքը և մահը ոչնչացնելու համար Յոր հրամանով իջավ երկնքից, մարմնապես ծնվեց Սուրբ Յոգուց և Կույս Մարիամից, հարաբերվեց աշակերտների հետ և մարդկությանը փրկագործելով Յոր կամքի համաձայն՝ զամվեց խաչին, մահացավ, թաղվեց, իջավ դժոխք, որը դողաց Նրանից, երրորդ օրը մեռյալներից հարություն առավ և քառասուն օր հարաբերվեց աշակերտների հետ, իսկ հետո երկինք տեղափոխվեց և նստած է Յոր աջ կողմում, հարության օրը գալու է Յոր փառքով և յուրաքանչյուրին դատելու է ըստ իր գործերի: Եվ Սուրբ Յոգուն, որին

Ծնող հորը»: Ընդ որում, Նիկի հանգանակից դուրս հանվեց «ὁμοιος κατὰ πάντα» («ըստ ամենայնի նման») բանաձևումը և **հաստատվեց Հայր և Որդի Աստծո նմանության** («ὁμοιον»՝ նման, այստեղից էլ՝ օմիական կամ նմանական անունը) **հավատամքը**: Ամվերապահորեն մերժվեց նաև նմանության ցանկացած այլ մեկնություն այն հիման վրա, թե «Որդի Աստծու ծնունդը հասանելի չէ ոչ մեկին, բացի նրան ծնող Հայր Աստծուց»: Ըստ այդմ էլ Կ. Պոլսի ժողովն առաջարկեց նաև հանգանակային ձևակերպումից դուրս նետել ինչպես «οὐσια», այնպես էլ՝ «νποστασις» եզրերը, քանի որ «դրանք սուրբգրական չլինելով»՝ անհասկանալի էին հավատացյալների համար:

Դոգմատիկական այդ նորարարությամբ **Կ. Պոլսի 361 թ. ժողովն անուղղելի հարված հասցրեց անոմեականությանը**: Կոստանցիուս կայսեր միջամտությամբ օմիականները եկեղեցում գերակա դիրք ձեռք բերեցին, սակայն դա չէր կարող տևականորեն լինել¹⁶: Օմիականության դիրքերի աստիճանական թուլացումն, անկասկած, պայմանավորված էր հոգևոր գործոններով: Դա արդյունք էր ավելի ու ավելի ակնհայտ դարձող նիկեական երրորդաբանության հաղթարշավի, որի փաստացի վկայությունն այն էր, որ համանմանականության աչքի ընկնող ներկայացուցիչներից շատերը (Աթանաս Անկյուրիացի, Մելետիոս և Պելագետոս Լաոդիկեցիներ և ուրիշներ) արդեն 363 թ. Անտիոքի ժողովում անցում կատարեցին մոր նիկեականության շարքերը և սերտ կապեր հաստատեցին Բարսեղ Կեսարացու հետ¹⁷: Իր հերթին **Հուլիանոսի կրոնական քաղաքականությունը ևս եկեղեցուն և հոգևոր դասին հարկադրեց համապատասխան հակաքայլեր մշակել**:

Այդ պահանջը հոգևոր դասին և դոգմատիկական հոսանքներին հարկադրեց վերանայել նախորդ տասնամյակների եկեղեցական պրակտիկան: Առաջնահերթություն համարվեց **միասնացման ձգտումը**՝ հավատքային բնույթի վիճաբանական ցանկացած հարց բացառապես եկեղեցական միջոցներով լուծելու, ինչ-

իբրև Մխիթարիչ և ճշմարտության Ոգի, ինչպես գրված է, ինքն՝ Աստծու Միածին Որդի Տեր և Աստված Հիսուս Քրիստոսը խոստացավ ուղարկել մարդկանց, որին ուղարկեց երկինք տեղափոխվելուց և Հոր աջ կողմում նստելուց հետո, որտեղից էլ գալու է դատելու կենդանիներին և մեռյալներին: Հայրերի կողմից պարզության համար ներդրված **էություն** բառը, որն անհասկանալի է ժողովրդի համար և գայթակղություն է առաջացրել, ժողովը հարմար է դատում բացառել, քանի որ այն Ս. Գրքում չի հանդիպում և որոշում է այսուհետ չօգտագործել **էություն** բառը, առավել ևս, որ Սուրբ գիրքը ոչ մի տեղ չի հիշատակում Հայր և Որդի Աստծու էության մասին: Խոսելով Հոր, Որդու և Սուրբ Հոգու դեմքի մասին, պետք չէ դրանք անվանել մեկ հիպոստաս, մենք Որդուն համարում ենք Հորը նման, ինչպես գրում և սովորեցնում է Սուրբ գիրքը: Եվ բոլոր հերետիկոսությունները, որոնք նախկինում դատապարտվել են և կրկին ի հայտ են եկել, որքանով որ հակադրվում են մեր կողմից շարադրված հավատքին, նզովյալ լինեն», **Феоодорит еписк. Кирский**. Церковная история. СПб., 1852, кн. II, гл. 21, с. 161-163.

¹⁶ Դոգմատիկական այս հոսանքի գլուխ կանգնած էր «գառան մորթի հագած» մոլեռանդ հակաերրորդաբան Եվդոկսիոս Գերմանիկեցին: Ինչպես վկայում է Սոկրատես պատմիչը, Մակեդոնիոսի աքսորից հետո Կ. Պոլսի եպիսկոպոսությունը ստանձնել էր արմատական արիստական Եվդոկսիոսը, որը մինչ այդ Անտիոքի եպիսկոպոսն էր, տե՛ս **Сократ Схоластик**. Церковная история, кн. II, гл. 40, с. 122, гл. 42, с. 124, տե՛ս նաև **Феоодорит еписк. Кирский**. Церковная история, кн. II, гл. 27, с. 181, кн. V, гл. 39, с. 380:

¹⁷ Այդ մասին մանրամասները տե՛ս **Филосторгий**. Церковная история. СПб., 1860, кн. 2, гл. 27-28, с. 122, 124.

պես նաև այդ հարցերը փիլիսոփայության (հեթանոսական տեսական մտքի) ոլորտից ձերբազատելու և ապոֆատիկ ոլորտ տեղափոխելու ուղղությամբ: **Այդ միտումներն իրենցով պայմանավորեցին նաև վերջնական շրջադարձը դեպի ուղղադավանություն**, ինչն էլ հիմք դարձավ նիկեականության աստիճանական վերելքի համար: Եկեղեցու ներքին կյանքում տեղ գտած այդ փոփոխություններն էլ ավելի աշխուժացրեցին **նոր նիկեական սերնդի գեներացիան**, որի ջանքերով հավատքային դաշտն աստիճանաբար մաքրվեց հակաերրորդաբանությունից՝ անխուսափելի դարձնելով ուղղադավան երրորդաբանության վերջնական հաղթանակը:

Միաժամանակ, ինչպես վկայում են սկզբնաղբյուրները, եկեղեցում հավատքային շահերի պաշտպանությունը զուգակցվեց ջատագովության (տեսական գործունեության) վերելքի հետ: Եկեղեցական պատմագրությունն այս ոլորտում նշանակալից իրադարձություն է համարում հատկապես նիկեականության ջերմ պաշտպաններ Ապոլինար Լաոդիկեցու, Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Աստվածաբանի գործունեությունը¹⁸: 360-ական թվականների սկիզբը նշանավորվեց նաև **նիկեական և հավատքային հարցերում նրանց բավականին մոտ կանգնած համանմանական արքունիքի եպիսկոպոսների** վերադարձով: Եվ, որ ամենակարևորն է, նշված պայմաններում **իրական դոգմատիկական հակամարտության չենք հանդիպում, քանի որ քաղաքական իշխանության աջակցությունից զրկված՝ հականիկեականությունն իր բոլոր դրսևորումներով անկասելիորեն դեպի անկում էր ընթանում**:

Իրավիճակը որոշակի փոփոխությունների ենթարկվեց Զովիանոս կայսեր իշխանության շրջանում¹⁹: Ինչ վերաբերում է Զովիանոսի կրոնական քաղաքականությանը, ապա այստեղ հանդիպում ենք որոշակի դժվարությունների: Թեև ոմանք նրան դասում են նիկեականների շարքը²⁰, սակայն վավերագրերը փաս-

¹⁸ Ի հակադրություն քրիստոնյաների կողմից «հունական գիտությունները սովորելու» Զովիանոսի արգելքների՝ Ապոլինար Լաոդիկեցի կրտսերը, Պլատոնի երկոսությունների օրինակով, շարադրել է Ավետարանները և Առաքելական թղթերը, որով «քրիստոնեությանը օգուտ տալուց» բացի, էապես նպաստել է կայսեր «չարամիտ գործունեության հաղթահարմանը», տե՛ս **Сократ Схоластик**. Церковная история, кн. III, гл. 16, с. 151; **Созомен Эрмий Саламинский**. Церковная история, кн. V, гл. 18, с. 355-357.

¹⁹ Ըստ Ամիանոսի՝ Զովիանոսը կայսերական իշխանության «պատվին» է արժանացել «ոչ թե սեփական բարեշնորհության, այլ հոր փառքի շնորհիվ»: Զովիանոսի գահակալության և կրոնական համոզմունքների մասին տե՛ս **Филосторгий**. Церковная история, кн. VIII, гл. 1, с. 383; **Сократ Схоластик**. Церковная история, кн. III, гл. 22, с. 157; **Созомен Эрмий Саламинский**. Церковная история, кн. VI, гл. 3, с. 380-381; **Феодорит еписк. Кирский**. Церковная история, кн. IV, гл. 1, с. 233-234 և այլն:

²⁰ Սուրատես պատմիչը գրում է, թե Զովիանոսը «վաղուց նվիրված էր համագոյության հավատին և այն անթաքույց գերադասում էր մյուսներից (**Сократ Схоластик**. Церковная история, кн. III, гл. 24, с. 163): Իսկ Թեոդորետը, որը «ամոթալի դաշինքը» որակում է իբրև Զովիանոսի նկատմամբ «աստվածային հոգատարության դրսևորում», հավելում է, որ նա, կայսրություն վերադառնալով, ամենից առաջ «օրենք հրապարակեց, որով հռչակում էր արքունիքի եպիսկոպոսների վերադարձը և միաժամանակ հրամայում, որ եկեղեցիները հանձնվեն նրանց, ովքեր անխաթար պահպանել են նիկեական հավատը» (**Феодорит еписк. Кирский**. Церковная история, кн. IV, гл. 2, с. 235): Սակայն այդ պնդումները փաստական

տում են, որ կրոնների նկատմամբ կայսեր քաղաքականությունը աչքի է ընկել հանդուրժողականությամբ (տոլերանտությամբ)²¹:

Այդ պայմաններն էլ վճռական դերակատարություն ունեցան ուղղադավան երրորդաբանության վերջնական հաղթանակի գործում: **363 թ. Անտիոքի ժողովում շուրջ երեք տասնյակ եպիսկոպոսներ հռչակեցին նիկեական երրորդաբանության շարքերն անցնելու** մասին²²: Հատկանշական էր, որ ժողովա-

հիմնավորում չունեն: Այդ եզրահանգումը կարելի է փաստել նրանով, որ Հովհաննոսի շրջանում ևս չարունակվում էին եկեղեցական-դոգմատիկական վիճաբանությունները, «քանի որ տարբեր հավատի ներկայացուցիչները (համանմանականները՝ Ա. Ք.) կայսրին անդադար ծանծրացնում էին՝ հույս ունենալով թույլտվություն ստանալ գործելու նրանց դեմ, ում իրենց հակառակորդներն էին համարում (ընդդեմ անոմեականների՝ Ա. Ք.)»: Կայսրը, սակայն, բոլոր այդ դիմումներն անպատասխան է թողնում, հայտարարելով. «Ես ատում եմ թշնամությունը, իսկ համամտություն պահպանողներին սիրում եմ ու հարգում», որից հետո բոլոր «մրցակցող կրթերը հանդարտվեցին» (տե՛ս **Сократ Схоластик**. Церковная история, кн. III, гл. 25 с. 163):

Ըստ էության անորոշ է նաև Աթանաս Ալեքսանդրացու նկատմամբ Հովհաննոսի վերաբերմունքը, քանի որ սկզբնաղբյուրներն այդ մասին ամբողջական տեղեկություն չեն հաղորդում: Փիլոստորգիոսն, օրինակ, գրում է, որ Եդեսիայում կայսեր ազգականները մշտապես գործում էին ընդդեմ Աթանասի, որը ձգտում էր ձեռք բերել կայսեր հաճությունը: Բայց Հովհաննոսը, առաջարկությունն ընդհանուր քննարկման դնելով, ձեռնպահ է մնում և որևէ կողմի նկատմամբ ակնհայտ հակվածություն չի դրսևորում (տե՛ս **Филосторгий**. Церковная история, кн. VIII, гл. 6, с. 386): Սոզոմենոսն իր հերթին հավաստում է, թե Աթանաս Ալեքսանդրացին, մերժավորների հետ խորհրդակցելուց հետո, մեկնում է Անտիոք, ներկայանում կայսերը և շարադրում այն ամենը, ինչը պահանջվում էր հավատի ուղղադավանության համար (տե՛ս **Созомен Эрмий Саламинский**. Церковная история, кн. VI, гл. 5, с. 384-385): Թեոդորետը պնդում է, որ կայսրը նամակով դիմում է Աթանաս Ալեքսանդրացուն՝ խնդրելով իր «համար շարադրել հավատի ճշմարիտ վարդապետությունը», և Աթանաս Մեծը, «հարցը քննարկելով գիտնական եպիսկոպոսների հետ, պատասխան նամակում Հովհաննոս կայսերը համոզում է պահպանել նիկեական հավատն իբրև առաքելական ուսմունքին համապատասխանող շարադրանք» (տե՛ս **Феодорит еписк. Кирский**. Церковная история, кн. IV, гл. 2, с. 235): Թեոդորետի պատմության մեջ պահպանվել է նաև Հովհաննոս կայսեր համար Աթանաս Ալեքսանդրացու կողմից գրված ժողովական ուղերձի տեքստը (տե՛ս **Феодорит еписк. Кирский**. Церковная история, кн. IV, гл. 3, с. 235-239): Այն, որ Աթանաս Ալեքսանդրացու նկատմամբ Հովհաննոս կայսրը բարի կամք է դրսևորել և խնդրել է իր համար գրել «տիեզերական հավատի մասին», հավաստում է նաև Հիլարիոսը. տե՛ս **Migne J. P.** Patrologiae cursus completus. Series Graeca (այսուհետ՝ PG). T. XXVI, Paris, 1865, p. 813, 814.

²¹ Հովհաննոս կայսեր տոլերանտ կրոնական քաղաքականության մասին է վկայում Անտիոքի 363 թ. ժողովական ուղերձի նկատմամբ վերաբերմունքը: Այդ մասին Սոկրատեսը գրում է, թե ցանկանալով կանխարգելել հավատքի մասին տարբեր կերպ մտածողների թշնամանքը, կայսրը հայտարարում է, թե «անկախ այն բանից, թե ով ինչպես է հավատում, նա ոչ ոքի չարիք չի պատճառի, բայց կսիրի և առավելություն կտա նրան, ով առավելագույնս կձգտի նպաստել եկեղեցու միասնացմանը», **Сократ Схоластик**. Церковная история, кн. III, гл. 25, с. 164, հմմտ. **Migne J. P. PG**, T. XXVI, p. 819-824. Նույնը պետք է ասել նաև վերը նշված համանմանական եպիսկոպոսների պահանջի մասին՝ ետ վերադարձնել անոմեականներին տրված աթոռները, իսկ կայսեր պատասխանը («Ես ատում եմ թշնամանքը, իսկ համամտությունը պահպանողներին՝ հարգում») կարծում ենք այլ կերպ չի կարելի որակել, քան կրոնական հանդուրժողականություն (եթե չասենք անտարբերություն):

²² 363 թ. Անտիոքում, Մելետիոս եպիսկոպոսի գլխավորությամբ տեղի ունեցած ժողովում, համանմանական (ըստ Սոկրատեսի՝ մակեդոնական) և Ակակիոս Կեսարացու գլխավորած

կանները հռչակեցին **նիկեական ուղղադավանությանը չափազանց մոտ** այն հավատամքը, թե «Որդի Աստված ծնվել է Հայր Աստծու էությունից և որ Որդին էությանը մման է Հորը»: Ու թեև նրանք Նիկեայի ժողովն անվանում են «Սուրբ», իսկ նրա կողմից հաստատված դավանանքն՝ «անսասան», այնուամենայնիվ, «համագոյություն» եզրը մեկնաբանեցին ոչ թե նիկեական, այլ՝ համանմանական «նմանություն ըստ էության» ըմբռնումով²³: Ճիշտ է, Աթանաս Ալեքսանդրացին դոգմատիկական այդ կողմնորոշումը ներկայացնող առանձին եպիսկոպոսների նկատմամբ դրական վերաբերմունք չի ցուցաբերել, համարելով, որ նրանք «ձևացնում են, թե դավանում են նիկեական հավատքը, բայց իրականում մերժում այն»²⁴, սակայն անուրանալի է և այն, որ Ալեքսանդրիայի 362 թ. ժողովից հետո ձևավորված դոգմատիկական այդ հոսանքը հանդես եկավ «նոր նիկեականության» որակով:

Այդ ամենն էլ (Ալեքսանդրիայի 362 թ., Անտիոքի 363 թ., ինչպես նաև Արևմտյան եկեղեցու Թիանի 367 թ. և Լամպսակիի 367 թ. ժողովները) վերջնական ճանապարհի հարթեցին նիկեական ուղղադավանության հաղթանակի և նոր նիկեական սերնդի ձևավորման գործում:

ФОРМИРОВАНИЕ НОВНИКЕЙСКОЙ ТРИДОЛОГИИ

А. Г. КАЛАШЯН

Тридология Александрийского собора 362г. имела огромное историческое значение. На соборе впервые после Никейского собора 325г. вновь была провозглашена концепция единосущия Божественной Троицы. Тем самым решения Александрийского собора стали ортодоксальными ориентирами для Церкви.

На основе никейско-александрийского вероисповедания на Антиохийском поместном соборе 363г. было сформировано новоникейское догматическое направление, усилиями которого в начале 80-ых годов IV века Церковью безвозвратно был преодолён антитринитаризм.

«ակակիոսական» 27 եպիսկոպոսներ հռչակեցին համագոյության աստվածաբանության շուրջ միավորվելու մասին: Հովիանոս կայսերը ուղղված ժողովական ուղերձում կարդում ենք. «զեկուցում ենք ձեր բարեպաշտությանը, որ մենք ընդունում ենք առաջին՝ Նիկեայում վաղուց տեղի ունեցած սուրբ ժողովի հավատը, քանի որ նրանում հաստատված համագոյությունը հայրերի կողմից որոշակի մեկնաբանություն է ստացել, համաձայն որի այն նշանակում է, որ Որդին ծնվել է Հայր Աստծու էությունից և որ Որդին էապես մման է Հորը, այլ ոչ թե այն, որ անճառելի ծնունդը տեղի է ունեցել ինչ-որ կրթից: Իսկ էություն բառը հայրերի կողմից ընդունվել է ոչ թե այն բանի համար, որ հանդիպում է հեթանոս գրողների (փիլիսոփաների՝ Ա. Բ.) մոտ, այլ Արիոսի կողմից Քրիստոսի մասին օգտագործվող սրբապիղծ «ոչ էությունից» բառը հերքելու համար, և որն ի վնաս եկեղեցու համամտության՝ առավել համարձակ, հանդուգն ու անամոթ կերպով այժմ օգտագործում են անոմեականները», **Сократ Схоластик**. Церковная история, кн. III, гл. 25, с. 164: Հմմտ. **Созомен Эрмий Саламинский**. Церковная история, кн. VI, гл. 4, с. 283-284:

²³ Անտիոքի 633 թ. ժողովի դավանաբանական սահմանման մանրամասները տե՛ս **Сократ Схоластик**. Церковная история, кн. III, гл. 25, с. 164.

²⁴ Տե՛ս **Свт. Афанасий Великий**. Послание къ Императору Ювиану / Творения в четырех томах. Т. III, М., 1994, с. 176.

THE FORMATION OF NEONICEAN TRIDODOLOGY

A. G. KALASHYAN

The tridology of Alexandrian Council of 362 has great historical significance. After the Nicaean Council of 325 it was first time declared the concept on single nature of Holy Trinity. The decisions of Alexandrian Council of 362 became orthodox guiding lines for the Church.

In the Antioch Council of 363 was formulated neonicean dogmatic movement on the basis of Nicaean-Constantinople Creed and with the assistance of this movement the Church could overcome the anti-trinity at the 80s of IV century.

ԱՆՏԻՈՔՅԱՆ ՀԱԿԱՍՊՈԼԻՆԱՐԱԿԱՆ ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վ. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

Եկեղեցական մատենագրությունը վկայում է, որ անտիոքյան քրիստոսաբանությունը ձևավորվել և բյուրեղացել է Անտիոքում և մերձակա շրջաններում լայն տարածում ունեցած գնոստիկության, երևութական հերձվածի, մանիքեականության, ավելի ուշ՝ Պողոս Սամոսատցու դինամիստական հերձվածի դեմ մղվող անհաշտ պայքարում: Եվ քանի որ ապոլինարականությունը ևս մերժում էր Հիսուս Քրիստոսի իրական, կատարյալ մարդկային բնությունը, անտիոքյան քրիստոսաբանների համար այն ևս «անհանդուրժելի հերձվածի» համարում է ունեցել:

Քաղկեդոնականության ջատագովության դիրքերից հանդես եկող եկեղեցագետներն ու աստվածաբանները փորձում են հիմնավորել, թե գնոստիկյան դուալիզմի և մարդու ազատ կամքին հակադրվող ճակատագրապաշտության դեմ պայքարում անտիոքացիները պաշտպանում էին մարդուն և նրա ազատությունը, որի պատճառով էլ «անտիոքյան բարեպաշտությանը ... հոգեհարազատ էր մեզ համագոյ և մեզ փրկագործող Քրիստոսի կատարյալ մարդկային բնությունը»¹: Այդ համատեքստում լիովին ընդունելի համարելով այն պնդումը, որ անտիոքացիների համար անընդունելի է եղել «Քրիստոսի կատարյալ մարդկային բնությունը մերժող» ցանկացած աստվածաբանական լուծում, հավասարապես պետք է մատնանշել և այն, որ այդ գործընթացում նրանք հիմք են դրել այնպիսի քրիստոսաբանական վարդապետության, որը շուրջ երկու դար ցնցումների մեջ է պահել ընդհանրական եկեղեցին և վերջին հաշվով դարձել եկեղեցու դավանաբանական պառակտման հիմնարար պատճառներից մեկը:

Անտիոքյան քրիստոսաբանության հերձվածող էությունը չի կարող «արդարացնել» նաև քաղկեդոնական ջատագովների այն մոտեցումը, թե անտիոքացիներն ազգային և տեղագրական առումով մերժ են եղել աստվածաշնչական և

¹ Карташев А. В. Вселенские Соборы. СПб., 2002, с. 200.